

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՄԱԿԲԱՅԱԿԱՆ
ԴԵՐԲԱՅՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Թուրքերենի մակբայական դերբայների և հայերենի՝ դրանց համարժեքների զուգադրական մեր սույն համեստ ուսումնասիրությունը նպատակաուղղված է նախ և առաջ հայ ուսանողներին թուրքերենի դասավանդման գործընթացի հետագա կատարելագործմանը, հայաստանյան բուհական համալսարանական դասագրքերի ու ձեռնարկների ստեղծման համար տեսական հենք ձևավորելուն¹:

Ժամանակակից որոշ թուրք լեզվաբաններ թուրքերենում բայը (eylem, fiil) բաժանում են երկու խմբի՝ դիմավոր բայեր և բայական ձևեր կամ դերբայներ (eylemsi, fiilimsi): Նրանց կարծիքով՝ բայական ձևերը, ունենալով իրենց հիմնական նշանակությունը, խոսքի մեջ հանդես են բերում խոսքիմաստային այլ՝ գոյականի, ածականի, մակբայի իմաստներ ու երանգներ, որոնք, սակայն, չեն ազդում նրանց բայական հիմնական հատկանիշների վրա: Թերևս, ճիշտ են վարվել այն թուրքագետ-քերականները, ովքեր որոշ դերբայների՝ այլ խոսքիմաստային հատկանիշների առարկայությունը դիտել են իբրև յուրահատուկ ծավալման դրսևորում, բայց դրանք հիմք չեն ընդունել՝ դերբայները բայից անջատելու և իբրև առանձին խոսքի մաս դիտարկելու համար²:

¹ Տե՛ս և հմմտ. նաև՝ Ռ. Մելքոնյան, Ք. Միրզոյան, Լ. Սահակյան, Ալ. Սաֆարյան, *Թուրքերենի ճրագիր*, Երևան, ԵՊՀ հրատ., 2010:

² Մասնավորապես տե՛ս T. N. Gencan, *Dilbilgisi*, Ankara Üniversitesi Basımevi, Ankara, 1979, ss. 379-387. N. Koç, *Yeni Dilbilgisi*, İnkılap Kitabevi, İstanbul, 1990, ss. 305-334. Տե՛ս և հմմտ. նաև Ալ. Սաֆարյան, Լ. Սահակյան, Լ. Ամիրխանյան, Ժամանակակից թուրքերենի մակբայների դասակարգման հիմնահարցի շուրջ, «*Մրենդազիտության հարցեր*», (հոդվածների ժողովածու, պատ. խմբ.՝ պրոֆ. Գ. Մելիքյան) հ. 6, Երևան, 2006, էջ 296-317, տե՛ս նաև Ռ. Մելքոնյան, Ք. Միրզոյան, Լ. Սահակյան, Ալ. Սաֆարյան, *Թուրքերենի ճրագիր*, 6, 14-19:

Թուրքերենի բայի անդամ ձևերը կարող են հանդես գալ բայական չորս ասպեկտներով՝ հաստատական, ժխտական, կարելիության և անկարելիության: Վերջին երեք ձևերը կազմվում են բայահիմքին համապատասխան ածանցների ավելացումով, օրինակ՝ *gitmemek*-չգնալ(ը), *okuyabilmek*-կարդալ կարողանալ(ը), *sevmeyerek*-չսիրելով, *görmeyince*-չտեսնելուն պես, *istemeye istemeye*-չկամենալով (դժկամորեն), *gitmeyene*-չզնացող, *gelememek*-գալ չկարողանալ(ը): Մակբայական դերբայները, իրենց մեջ համատեղելով բայի ու մակբայի հատկանիշներ, չեն կազմում բայի «ավարտուն» ձևեր, չեն խոնարհվում, չունեն նաև ժամանակային ինքնություն կիրառություն: Մակբայական դերբայի պատկանելիությունը բայ խոսքի մասին արտահայտվում է նրանում, որ այն պահպանում են բայական կառավարումը, կարող է կազմվել տարբեր սեռերից և բայական բոլոր չորս ասպեկտներից: Բայական այս անդամ ձևերի կապը մակբայների հետ առավել վառ է արտահայտվում այդ երկու խոսքի մասերի շարահյուսական գործառնությունում՝ գործողության պարագայական բնութագրի արտահայտությամբ³:

Մակբայական դերբայները ժամանակակից թուրքերենի քերականության մեջ միավորում են բայածանցյալ կամ անդամ բայերի բազմաթիվ խմբեր: Դրանք մեծամասամբ բնութագրվում են որպես թեք հոլովներով տարբեր ծագման բայի անդամ ձևեր (անորոշ դերբայի թեք հոլովաձևերն), որանք մատնանշում են ընդհանուր-անորոշ գործողություն: Առանձին մակբայական դերբայներ, անցնելով մակբայների շարքը, ընդունվում են որպես քարացած ձևեր (այսպես՝ *gitgide*-աստիճանաբար, քիչ-քիչ, զնալով): Ժամանակակից թուրքերենում մակբայական դերբայը հանդես է գալիս որպես ստորոգյալի խմբի շարահյուսական անդամ, այսինքն՝ այն գործածվում է որպես պարագա (ձևի, ժամանակի, վիճակի): Մակդերբայն ածականական դերբայի հետ ունի քերականական ընդհանուր կարգեր (կերպ, սեռ, եղանակ):

Ժամանակակից թուրքերենի մակբայական դերբայները կազմվում են հատուկ ածանցների օգնությամբ, որոնք միանում են

³ Տե՛ս А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, изд-во "Академии наук СССР", Москва-Ленинград, с. 474.

բայի հիմքին (կամ էլ սահմանական եղանակի հիմքին-(i) *ken*, -*casına*): Ի տարբերություն ածականական դերբայների՝ մակբայականները նախադասության մեջ կատարում են բայական անդամի լրացման պաշտոններ: Գործառությանին և իմաստաբանական տեսանկյունից բաժանվում են հինգ խմբի՝ կապական նշանակության (*Bağlama ulacları*), վիճակ արտահայտող (*Durum ulacları*), ժամանակ (*Zaman ulacları*), պատճառ (*Sebeup ulacları*), համեմատություն կամ չափ (*Kıyaslama*) մատնանշող մակբայական դերբայներ⁴: Որպես բայածանցալային ձև՝ սրանք կազմում են նախադասության երկրորդական կենտրոնը, որն անհրաժեշտ իմաստից կախված՝ կարող է ունենալ նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Այն շարահյուսորեն ունի գործողության ու ժամանակի ծավալուն պարագայական գործառույթ, սակայն գուրկ է գործողության կատարման ժամանակի ցուցումից:

Մակբայական դերբայով արտահայտված ծավալուն պարաֆրաս հանդիսանում է նախադասության երկրորդ կենտրոնը: Սուբյեկտի առկայությունն այս դերբայով կազմված կառույցի ժամանակ դեռ չի ստեղծում ստորադասական նախադասություն. այն ընդունված է անվանել դարձված (նախադասության այս կաղապարներն իրենց շարահյուսական գործառույթով համապատասխանում են հայերենի դերբայական դարձվածներին):

Թյուրքագետ-լեզվաբաններից ոմանք մակբայական դերբայով արտահայտված ծավալուն պարագա ունեցող նախադասությունները համարում են ստորադասական: Մասնավորապես, թուրք լեզվաբան Սուհարեմ Հրզհինը կարծում է, որ իրականում դերբայով ու մակբայական դերբայով կազմված նախադասությունները միջանկյալ տեղ են գրավում պարզ ու բարդ նախադասությունների միջև (թուրքերենի քերականություններում նմանատիպ նախադասությունները կոչվում են «միջանկյալ»): Նրա դիտարկմամբ՝ «բայական այս ձևերը ցույց են տալիս գործողություն, դրանք իմաստային տեսանկյունից բայական բառեր են, որոնք չունեն գոյականական կիրառություն, չեն կարող դառնալ բայի խոնարհված ձևեր, ինչի համար էլ դրանց տրվում է նաև «բայի

⁴ St'ya M. Hengirmen, *Yabancılar için Türkçe*, Engin Yayınvi, İstanbul, 1999, s. 193. St'ya İsmail T. Banguoğlu, *Türkçenin grameri, Baha Matbaası*, İstanbul, 1974, ss. 427-440.

⁵ St'ya A. Кованов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 474.

չխոնարհվող ձևեր» բնորոշումը: Բայական խոնարհումներին կարող ենք անվանել բայական գործողության ձևեր, ածականական դերբայներին՝ հատկության, իսկ մակբայական դերբայներին՝ վիճակի ձևեր: Մակբայական դերբայները, չունենալով դեմք ու ժամանակ, ցույց են տալիս վիճակ և ոչ թե վերջնական գործողություն, այլ կերպ՝ խնարհված բայերի գործողության մեջ՝ երկրորդական գործողություն, այսինքն՝ խոնարհված բայերի բայական մակբայներն են: Եթե ածականական դերբայները արտահայտում են բայի հատկություն, ապա բայական մակբայները՝ գործողություն»⁶:

Ժամանակակից թուրքերենն ունի մակբայական դերբայների հարուստ համակարգ, որի մեջ մտնող բառերը դերբայների հետ մեկտեղ թուրքերեն նախադասություններին ընձեռում են արտահայտման լայն հնարավորություն, ինչպես նաև պարզություն են մտցնում վերջիններին մեջ: Ավանդաբար մակբայական դերբայները կամ գեյունդիումները (*gerendim, gerunds*)՝ որպես հիմնական գործողությանը օժանդակող երկրորդական բառեր, շարահյուսական պլանում մի քանի գործողություն արտահայտում են պարզ նախադասությամբ, ինչի արդյունքում էլ հնարավոր է լինում խուսափել նախադասության «անկանոնությունից», այսինքն՝ կազմում են նախադասության երկրայական կենտրոն, որը կախված անհրաժեշտ իմաստից՝ կարող է ունենալ նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ (հարկ է նշել, որ մակբայական դերբայները շարահյուսորեն կիրառվում են որպես ձևի ու ժամանակի շրջուն պարագաներ): Մակբայական դերբայները կամ օգտագործվում են առանձին (*gelerek, ahip, vermeden*), կամ դրվում են օժանդակ բայերից առաջ և այդպիսով կազմում բայող բայեր (ասվածի օրինակ կարող են հանդիսանալ մասնավորաբար *alıver, dıseyaz, dışe* ձևերը): Ստորև կփորցենք ներկայացնել ժամանակակից թուրքերենում կիրառվող մակբայական ածանցները՝ ծագումնաբանական ու գործառնության իրենց առանձնահատկություններով:

ա) Կտպական նշանակություն ունեցող մակբայական ածանցներ

⁶ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, İnkılap Kitabevi, İstanbul, 2000, ss. 319-320.

-ip, (-ip -up, -üp) ածանցը, կցվելով բայահիմքին, կազմում է մակբայական դերբայ և ցույց է տալիս գործողություն կամ վիճակ, որը նախորդում է գլխավոր գործողությանը: Ինչպես ակադեմիկոս Ա. Ն. Կոնոնովն է սահմանում, այս դերբայը մատնանշում է գործողություն (մեկ կամ ավելի անգամ՝ կախված ենթակայի նշանակությունից), որը նախորդում է մի այլ գործողությանը՝ ենթական բնութագրելով ձևի, ժամանակի, պատճառի պարագայի տեսանկյունից՝ **alıp-** վերցնելով, ստանալով, գնալով, ընդունելով⁷: -ip ածանցը կիրառական է եղել հին թյուրքերենում՝ հանդես գալով -p ձևով: «Արևմտյան թյուրքերենին» անցնելով՝ աստիճանաբար ձևեր է բերել օգնող ձայնավոր ածանց: Պետք է ասել, որ -p-ի ազդեցությամբ ածանցի ձայնավորը միշտ շրթնայնացված է եղել՝ **gel-up, id-üp, başla-y-up, çek-iip**: Ածանցի -ip, -ip ձևերը ի հայտ են եկել ավելի ուշ շրջանում (-up, -up ածանցը որոշ ժամանակ կիրառվել է նաև օսմաներենում՝ չենթարկվելով ձայնավորների ներդաշնակության օրենքին, օսմանյան շրջանում առաջ է եկել այս ածանցի՝ ձայնավորների ներդաշնակության կանոնին ենթարկվող կիրառությունը)⁸:

-ip-ով գերունդիումը հին թյուրքերենում խոնարհված բայերի նման օտաործվել է անցյալ ժամանակի համար, ինչպես օրինակ՝ հին թյուրքերենի հետևյալ ձևերում՝ **bilüp-ven, gelüp-sin, turup-dur, olup-idi**: Թյուրքերենում մակբայական այս դերբայը շատ հաճախ օգտագործվում է շաղկապի փոխարեն՝ արտահայտելով ժամանակի իմաստ (օրինակ՝ *Önünde diz çöktüp yalvaracaksın*-ում, նրա առջև ծունկի գալով, աղաչելու ես: *Kapıyı açıp içeri girdi*- [Նա], դուռը բացելով, ներս մտավ: *Koşup yanına geldi*-[Նա] վազելով ինձ մոտ եկավ):

-ip ածանցով մակբայական դերբայը, կիրառվելով **kalmak** բայի հետ, ցույց է տալիս տևականություն. **şasıp kalmak**-ապշել, շշմել, սաստիկ զարմանալ, հիացմունքից քարանալ, **bakıp kalmak**-այքերը

⁷ А. Кононов, *Граматика современного турецкого литературного языка*, էջ 474: St'u նաև Ալ. Աաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոբնազյան, *Թյուրքերենի դասագիրք*, գիրք Ա, Երրորդ լրամշակված հրատարակություն (լսմագրությամբ՝ պրոֆ. Գ. Ասատրյանի և դոց. Ա. Մարգարյանի), Ոսկան Երևանցի հրատ., Երևան, 2004, էջ 83:

⁸ М. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 322: Н. Дмитриев, *Строй турецкого языка*, изд-ство "Академии наук СССР", Москва, 1962, с. 42.

հառել (մեկին կամ մի բանի): Այս ածանցով դերբայը հանդես է գալիս որպես կրկնավոր բարդություն՝ արտահայտելով վիճակ, հաղորդելով գործողությանը բազմակիություն, երկարատևություն, լինելով -(y)a դերբայական դարձվածի քերականական հոմանիշը: Սակայն այս ձևը քիչ գործածական է՝ dōnūp dōnūp bakmak-շրջվելով նայել, ծնւծնւp dirilmek-ծանր հիվանդություն տանել, koşup koşup yorulmak-վազելով հոգնել, bağırop çağırop durmak-անընդհատ (անդադար) բղավել⁹: Adama bakıp bakıp güldüler-Մարդուն նայելով ծիծաղեցին /նայեցին ու ծիծաղեցին/: Այս ածանցը -maktan ածանցի հետ կիրառվելու ժամանակ արտահայտում է տևականություն և պատճառականություն (օրինակ՝ Merdiveni inip çıkmaktan nefesim kesildi-Աստիճանները իջնել-բարձրանալուց /իջնելուց և ելնելուց/ շուկչա կտրվեց): -ip ածանցով մակբայական դերբայն արտահայտում է գործողություն՝ ա) միանման սյուբեկտների. Başımı kaldırıp baktım-Բարձրացնելով գլուխս՝ նայեցի, բ) տարբեր սուբյեկտների. Buna rağmen akşam olup ta ortalık kararınca içime bir hüzün çöktü-Չնայած դրան, հենց որ ընկավ երեկոն ու մթնեց, ինձ մի թախիծ պարուրեց: գ) ta, te-«էլ» կապի (շեշտագուրկ) համադրությամբ. ցույց է տալիս, դերբայում անկա տրամաբանական շեշտը¹⁰. Sabah olup ta kız hamama gitmeğe hazırladığı zaman o geldi-Իսկ երբ բացվել էր առավոտը, և աղջիկը պատրաստվում էր բաղնիք գնալ, նա եկավ: -ip-ով կառույցները կայտղ են ցույց տալ գործողություն բոլոր ժամանակներում¹¹: Ժամանակը որոշվում է՝

ա) նախադասության ստորոգյալով. Orhan telefon edip beni tiyatroya çağırdı- Օրհանը զանգահարելով ինձ կանչեց թատյան:

բ) ժամանակի պարագայով՝ Yarın evde kalıp makaleyi yazacağım-Վաղը, տանը մնալով, հոդվածը կգրեմ:

Այս դերբայի ժխտական ձևը կազմվում է -ma (-me) ածանցով՝ gelip (եկավ և գալով)-gelmeyip (չեկավ և չգալով), gidip (գնաց և գնալով)-gitmeyip (չգնաց և չգնալով): Եթե բայահիմքը վերջանում է

⁹ St'ü N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 415:

¹⁰ St'ü A. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 475-476:

¹¹ St'ü Ալ. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմազոյան, *Թուրքերենի դասագիրք*, գիրք Ա, էջ 83:

ձայնավորով, ապա նրա և ածանցի միջև ավելանում է -y-հնչյունը (-yıp, -yip, -yup, -yüp)¹²:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ -ıp, -ip, -up, -üp ածանցով կազմված մակբայական դերբայն արտահայտում է. ա) գործողություն, որը նախորդում է մեկ այլ գործողությանը՝ բնութագրելով ստորոգյալը ձեռի, ժամանակի, պատճառի ե պայմանի տեսանկյունից, բ) գործողություն, որը տեղի է ունենում գլխավոր ստորոգյալում արտահայտված գործողության հետ միաժամանակ ու գուցահեռ, գ) ժամանակ կամ պայման, ընդ որում ստորադասական նախադասության գործողությունը կարող է հարակցել (միաժամանակ կատարվել) գլխավոր գործողությանը կամ էլ դրան նախորդել, իսկ գլխավոր գործողությունը կարող է արտահայտել արդյունք, որը հաջորդում է առաջին գործողությանը՝ արտահայտված դերբայով (օր.՝ *Ata dost gibi bakıp düşünün gibi binmeli*-Ձիուն, ընկերաբար նայելով-խնամելով, պետք է հեծնել թշնամաբար):

բ) Վիճակ արտահայտող մակբայական դերբայներ (*Durum ulaçları*)

-a, -e ածանցով կազմված մակբայական դերբայ

Հնուց ի վեր գործածություն ունեցող այս ածանցով կազմված մակբայական դերբայը հանդես է գալիս հետևյալ ձևերում՝ *koş-a* *koş-a* վազքով, *gül-e* *gül-e* մնաք բարով, ամենայն բարիք (բարեմաղթանք՝ գնացողին), *düş-e* *kalk-a* մեծ դժվարությամբ և այլն: Ժամանակակից թուրքերենում այս ձևերը հանդես են գալիս՝ ստանձնելով մակբային բնորոշ շարահյուսական պաշտոն (պարագա): Նախկինում, ինչպես գրում է Մ. Էրգինը, այս դերբայներն ունեին ինքնուրույն կիրառություն՝ *koş-a* (*git-*), *çek-e* (*götür-*), *kov-a* (*var-*): Աստիճանաբար կորցնելով ինքնուրույնությունը՝ դրանք վերածվել են կրկնավոր բարդությունների: Ինքնուրույն կիրառությամբ գերունդիումներ այսօր կարելի է հանդիպել շատ հազվադեպ¹³: Նախկինում ինքնուրույն

¹² St'u Ömer Demircan, *Türkiye Türkçesinde Kök-Ek Bileşimleri*, Türk Dil Kurumu Yayınları: 436, Ankara Üniversitesi Basımevi, Ankara, 1977 (տե՛ս նաև Աղբյուրների և գրականության ցանկը, նույն տեղում, էջ 114-126), ինչպես նաև Ալ. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմազյան, *Թուրքերենի դասագիրք*, էջ 83, 309-310:

¹³ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 320:

կիրառություն ունեցող di-y-e մակբայական դերբայը այսօր արդեն ձեռք է բերել կապական գործառնություն՝ *böyledir diye...* մտածելով, որ այդպես է..., *geldin diye...* մտածելով, որ եկել ես... և այլն: Այս գերունդիումն առանձին կիրառվում է միայն ժամանակի արտահայտման համար՝ *kal-a* (պակաս), *geç-e* (անց)¹⁴: Ըստ Մ. Էրգինի՝ այս գերունդիումը ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս օգտագործվում է՝ բարդ բայեր կազմելու համար՝ *gel-e bil-, düş-e yaz-, yap-a dur-* և այլն (*Küçük kardeşim ağlaya ağlaya eve geldi-Փոքր եղբայրս լաց լինելով տուն եկավ*)¹⁵: Ժամ ցույց տվող բառերի հետ կիրառվելիս այն կազմում է ժամանակի իմաստ արտահայտող մակբայ: *Saat ona çeyrek kala burada ol-* Այստեղ եղիր տասնից տասնհինգ (քառորդ) պակաս: *-a, -e* ածանցը միահյուսված ձևով հանդես է գալիս նաև *ortaklaşa* (համատեղ, միասին) և *nöbetleşe* (հերթով, փոխ առ փոխ, միմյանց հետևից) բառերի կազմում: *Bu işi ortaklaşa yapacağız-* Այս գործը պետք է անենք համատեղ ուժերով (միասնաբար): Առկա է նաև *a.....-a* մակբայական դերբայի կրճատված ձևի կիրառությունը (*Ayrdılar bizi birbirimizden./ Մեզ միմյանցից բաժանեցին, Hem de göz göre yürek parçalaya./ Ակնհայտորեն ու բացեիքաց (մեր) սիրտը կտոր-կտար անելով*):

Այս ածանցը, կցվելով *demek* (ասել) բայի արմատին, կազմում է *diye* մակբայական դերբայը, որն ունի հետևյալ կիրառությունները.

ա) ինքնուրույն գործածվելիս արտահայտում է *-arak-ի* իմաստ (*Hemen dönerim diye çıktı, ama dönmedi-* Ասելով, որ իսկույն կվերադառնա, դուրս եկավ, բայց չվերադարձավ: *"Vallahi ben söylemedim" diye yemin etti-* Ելով/եց՝ ասելով. «Աստվածն վկա, ես չեմ ասել»),

բ) օգտագործվում է նաև *-dır diye* կառույցի ձևով՝ արտահայտելով կատեգորիկություն. *Bu saatte mutlaka uyanmıştır diye düşündüyümdüm-* Մտածում էի, թե ես այդ ժամին անպայման պետք է, որ արթնացած լինի:

գ) *Diye* մակբայական դերբայը հանդես է գալիս նաև որպես հետադրություն և *adında, adlı* (անունով, անվամբ) իմաստն է արտահայտում. *Buralarda Hacı Osman diye biri varmış-* Այստեղ Հաջի Օսման անունով մի մարդ է եղել (Այստեղ եղել է ոմն Հաջի Օսման):

¹⁴ Ալ. Մաֆայյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմազյոզյան, *Թուրքերենի դասագիրք*, էջ 59:

¹⁵ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 321:

դ) Diye մակբայական դերբայը կարող է ցույց տալ նաև գործողության նպատակը ե շարժառիթը՝ օգտագործվելով ըղձական կամ էլ հրամայական եղանակի հետ (Օր.՝ *Seni uyandırmasin diye odadan çıktı*- Նա դուրս եկավ սենյակից, որպեսզի քեզ չարթնացնի: *Çabuk gidelim diye taksiye bindik*-Նստեցինք տաքսի, որպեսզի շուտ գնանք-[շուտ գնալու նպատակով]):

ե) Diye մակբայական դերբայը գործածվում է որպես *gibi* հետադրության հոմանիշ. *O bey diye yazıyor*. Նա ապրում է իշխանի պես/որպես մի իշխան/իշխանավարի:

Մակբայական -arak, (-erek) ածանցով կազմված դերբայը ժամանակակից թուրքերենում ունի լայն գործածություն՝ *yap-arak* անելով, *oku-y-arak* կարդալով, *gel-erek* գալով, *bekle-y-erek* սպասելով: Թուրք լեզվաբանների կարծիքով այս ածանցը հատուկ է «արևմտյան թուրքերենին, որը հետագայում փոխանցվել է հին թուրքերենին, այնուհետև հանդես է եկել օսմաներենում: Այն ձևավորվել է *-a, -e* դերբայական և *-rak, -rek* ածանցների միացումից»¹⁶: Հին թուրքերենի վերջին շրջանում այն դրսևորվել է՝ *-irak, -irek, -urak, -ürek (yi-y-ürek, aci-y-irak)* տարբերակներով: Օսմանյան շրջանում այս ածանցը վերջնականապես ստանում է *-arak, -erek* ձևը և այդպես էլ կիրառական է մինչև օրս:

-(y)arak//-(y)erek ածանցի կազմության մասին իրենց կարծիքն են հայտնել արևելագիտության դասականներ Ա. Քազում Բեկը, Ժ. Դենին և այլք, որոնք նույնպես այն կարծիքին են, որ նշյալ ածանցը կազմված է երկու մասնիկների միացությունից՝ *-(y)a+rak*, որտեղ *-(y)a-*ն դիտարկում էին որպես մակբայական դերբայի կամ ըղձական եղանակի հիմք, իսկ *-rak-ը*՝ որպես համեմատական աստիճանի ցուցիչ-վերջածանց¹⁷: Ակադեմիկոս Ա. Ն. Կոնոնովը նախապես *-(y)arak* ածանցը վարձել է բաժանել երկու մասնիկի՝ *-(y)ar+ak*, *-(y)ar<garu-*ն դիտարկել է որպես ներկա-ապառնի ժամանակի դերբայ, իսկ հետագայում կարծիք է հայտնել, որ *-ak* մասնիկի մեջ կարելի է տեսնել գոյական անուն (*ok*)՝ «ժամանակ» իմաստով *-(y)ar-*ով բայական ձևը հանդես է գալիս որոշյի

¹⁶ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 322:

¹⁷ А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 476: Sh'u նաև Казем-Бек, *Общая грамматика турецко-татарского языка*, Казань, изд.1-1839, с. 59.

գործառնություն՝ ok բառի համար)¹⁸, ըստ ռուսաստանյան թյուրքագետ-լեզվաբանի -y ar+ok>(y)arak համադրությունը վեր է ածվել յուրահաստուկ մի կառույցի, որը սկսել է հանդես գալ իր երկրորդական բաղադրիչի իմաստով՝ գործողության բնութագրման գործառնություն¹⁹:

-(y)arak, -erek ածանցով կազմվող մակբայական դերբայը ցույց է տալիս.

ա) գործողություն, որը տեղի է ունենում գլխավոր ստորոգյալով արտահայտված գործողության հետ համընթաց, բ) գործողություն, որը անմիջականորեն նախորդում է ստորոգյալով արտահայտված գործողությանը: Այս գործառնություն -arak, -erek-ով կազմվող մակբայական դերբայը հանդիսանում է -(y)ip-ով դերբայի քերականական հոմանիշը, միայն այն տարբերությամբ, որ -(y)arak, -erek գործողությունը բնութագրում է առավելապես ձևի տեսանկյունից, իսկ -(y)ip-ով մակբայական դերբայը՝ ձևի, ժամանակի, պատճառի ու պայմանի տեսանկյունից: Նախադասության մեջ երկու միասեռ պարագաների առկայության դեպքում մեկն արտահայտվում է -(y)ip-ով, իսկ մյուսը՝ -(y)arak-ով:

-(i) ken վերջածանցով մակբայական դերբայը ցույց է տալիս երկարատև գործողություն, որին զուգընթաց կատարվում է մեկ այլ գործողություն: Դերբայական այս ածանցը կազմված է -i «լինել» բայահիմքից և բայական անուն կազմող -ken ածանցից: Ինքնուրույն կիրառության դեպքում (փաստորեն ժամանակակից թուրքերենում էլ առկա է -iken-ի և՛ ինքնուրույն բառի, և՛ ածանցի նշանակությունը) ունի սեփական շեշտ ու ժողովրդախոսակցական լեզվում երկարատև օգտագործման սրդյունքում է վերածվել ածանցի²⁰ ենթարկվելով հետևյալ հնչյունական վավախությունների. ա) միանալով բաղաձայնով ավարտվող հիմքերին՝ -iken-ի -i-ն ընկնում է. yazar+iken>yazarken, բ) ձայնավորով ավարտվող հիմքերի դեպքում՝ -iken-ի i-ն երկու ձայնավորների միացման արդյունքում վերածվում է -y-ի՝ öğrenci iken-öğrenciyken: գ)-ken-ը չի ենթարկվում ձայնավորների ներդաշնակության կանոնին՝ küçükkken-փոքր եղած ժամանակ, çocukken-երեխա եղած

¹⁸ А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 477:

¹⁹ А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 477-78:

²⁰ А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 485:

Ժամանակ, **burada-y-ken-** այստեղ եղած ժամանակ: **-ken** ածանցով դերբայը, ի տարբերություն մյուս մակբայական դերբայների, կազմվում է ոչ թե բայահիմքերից ավելանալով, այլ սահմանական եղանակի ժամանակաձևերի հիմքերից ու հարկադրական եղանակից: Անցյալ ժամանակի պայմանական, ըղձական և հրամայական ձևերը բարդ մակբայական դերբայներ չունեն: **-ken** ածանցով մակբայական դերբայը կամ գերունդիումը կազմվում է սահմանական եղանակի ժամանակաձևերի և հարկադրական եղանակի հիմքերից, ինչպես նաև անուններից՝ դրված ուղղական կամ ներգոյական հոլովներով: Այսպես՝ **yapar-ken**-անելիս, **veriyor-ken**-տալիս (տալու ժամանակ), **gişmiş-ken**- գնացած ժամանակ, **olacak-ken**-լինելու, ժամանակ, **gelmeli-y-ken**- այն ժամանակ, երբ պետք է գա:

Նշենք, որ հարկադրական եղանակով կազմված մակբայական դերբայի վտխարեն շատ հաճախ օգտագործվում է **gelmek lâzımken** ձևը: Այս ածանցը, մատնանշում է ինչպես գործողության վիճակը, այնպես էլ ժամանակ: Այսինքն՝ այս ածանցը վիճակի մակբայի նման կարող է հանդես գալ նաև ժամանակի մակբայի դերում²¹. **Dedem, Musul'da savaşıırken ölmüş.** Պապս զոհվել էր Մոսուլում կռվելու ժամանակ (երբ կռվում էր):

Խոսակցական թուրքերենում և որոշ թուրքական բարբառներում այս մակբայական ածանցը բանավոր խոսքում կարող է ենթարկվել ձայնավորների եերդաշնակության կանոնին՝ **burada-y-kan, yapar-kan**²²: Այս մակբայական դերբայով կազմվում են ժամանակի պարագա երկրորդական նախադասություններ, որոնք հակադրվում կամ համադրվում են գլխավորին «/այն ժամանակ, երբ», «մինչդեռ» և այլն²³: Օրինակ՝ **Sen buraya gelirken yağmur yağmaya başladı:** Սակայն երբ **-iken**-ը կցվում է ներկա-ապառնի ժամանակի հիմքին, ցույց է տալիս ստորոգյալի գործողության հետ համընթաց կատարվող գործողություն, այլ ոչ թե նշում է գործողության կոնկրետ ժամանակը: Որոշ դեպքերում **-iken**-ը հանդես է գալիս որպես **-(ı)p** և **-(y)arak** ձևերի

²¹ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 327:

²² M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 328:

²³ В. Гордлевский, *Грамматика турецкого языка*, Москва, 1928, с. 130.

քերականական հոմանիշ՝ *Dün sokaktan giderken iki kişiye rastgeldim*- Երեկ, փողոցով անցնելիս, երկու մարդու հանդիպեցի:

-*iken* մակբայական դերբայով կազմում է նաև զիջական իմաստով կառույցներ, որն է երևույթ կամ վիճակ մեկ այլ երևույթի կամ վիճակի հետ համադրելու, ինչպես նաև հակադրելու նպատակով՝ *Samsun bundan kırk yıl evvel küçük kasabayken, şimdi Türkyenin büyük ve güzel şehirlerinden biri olmuştur*.-Թեև սրանից քառասուն տարի առաջ Սամսունը փոքրիկ մի գյուղաքաղաք էր, այժմ դարձել է Թուրքիայի մեծ և գեղեցիկ քաղաքներից մեկը²⁴:

Հրապա Աճառյանը նկատում է, որ հայերենի մի շարք բարբառներ վտխառել են թուրքերենի ոյմ ղերբայական ածանցներ: Այսպես, Պոլսի բարբառում -*iken*-ը անորոշի հետ միասին ցույց է տալի «ժամանակ, միջոց», օրինակ՝ «Էրթա՛ լն-իքեն, բերե՛ լն -իքեն / այս /ն/ հողը դրվում է թե՛ առաջին, թե՛ երկրորդ և թե՛ երրորդ դեմքի համար: Այն ածանցը կայտղ է ավելանալ նաև հարակատար դերբային՝ առանց դիմոյմ ինքնի և մատնանշել ժամանակ՝ «բռնած իքեն»-երբ /ես/ բռնեցի, «հասած իքեն»- երբ /դու/ հասար: Փոխառության այս երևույթը առկա է նաև Նոր Նախիջևանի բարբառում. -*iken*-ը ավելանալով անցյալ դերբային՝ ցույց է տալիս գործողության կատարման ժամանակ, այս դեպքում, սակայն, -*iken*-ը ստանում է հայերենի դիմոյմ ինքնի, ինչպես՝ «նայա՛ձնիքեն»-երբ ես նայում էի: Անորոշ դերբայի հետ հանդես գալով՝ ցույց է տալիս գործողության կատարված ժամանակը, ինչպես՝ «գարթա՛լնիքեն»-կայտղալու ժամանակ, «ասէլնիքեն»-ասելու ժամանակ²⁵:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հին թուրքերենից անցած և այսօր էլ կիրառություն ունեցող -*i*, -*i*, -*u*, -*ü* ածանցով կազմված մակբայական դերբայը: Ժամանակակից թուրքերենում այն հանդիպում է միայն բարդ բայերի կազմում՝ *al-i ver-*, *çek-i ver-*, *sor-u ver-*, *gör-ü ver-* և այլն: Լեզվի զարգացման արդյունքում -*i*, -*i*, -*u*, -*ü* ածանցն իր տեղը զիջում է -*a*, -*e* ածանցին: Նշենք որ, արևմտյան թուրքերենում ձայնավոր ածանցով գերունդիումները հետագայում -*a*, -*e* ածանցներով են դերսևորվել:

²⁴ Ալ. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմազյոզյան, *Թուրքերենի դասագիրք*, էջ 133:

²⁵ Հ. Աճառյան, *Լիակատար քերականության հայոց լեզվի*, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 5, Երևան, 1965, էջ 43-44:

Այսպես՝ *di-y-ü - di-y-e, becer-i bil- - becer-e bil-*: Սակայն ժամանակակից թուրքերենի որոշ բարբառներում և խոսվածքներում դեռևս կենսունակ և գործածական են *-ı, -i, -u, -ü* մակբայական դերբայակերտ այս ածանցները²⁶: Հատկապես բնորոշ են Տրապիզոնի, Ռիզեի (Համշեն, Չամլըհամշեն) նահանգների բարբառներին²⁷:

Նախկինում այս ածանցով դերբայական կառույցը՝ որպես մակբայ, լայնորեն կիրառվել է ինչպես ինքնուրույն, այնպես էլ կրկնական ձևերով, ինչպես օրինակ՝ հին թուրքերենի *utan-ı, kızar-ı, iste-y-ü, sevin-ü sevin-ü, işid-ü işid-ü, ağla-y-u ağla-y-u* ձևերում: Սակայն գրավոր խոսքում, այս ածանցներով դերբայական ձևերը լայն կիրառություն չունեն և իրենց տեղը զիջում են *-a, -e* կրկնակ գերունդիումին: *-ı, -i, -u, -ü* գերունդիումի ուշագրավ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ վերջինս նախկինում չի ենթարկվել ձայնավորների ներդաշնակության կանոնին²⁸: *-ı, -i, -u, -ü* ածանցներով ստեղծվել են ընդհանուր իմաստ ունեցող գոյականներ և ածականներ, որոնք արդեն զիտակցվում են որպես քարացած ձևեր: Օրինակ՝ *yapmak-yapı* (շինություն), *batmak-batı* (1. մայրամուտ, 2. արևմուտք), *kokmak-koku* (հոտ, բուրմունք)²⁹:

Բացի գործողություն մատնանշելուց *-ınca, -ince, -unce, -ünce* մակբայական դերբայի ածանցն արտահայտում է նաև ժամանակ՝ *yap-ınca* անելուն պես (հմմտ. *yaptığı zaman* անելու [արած] ժամանակ): Նախկինում գոյություն են ունեցել *-gmça, -ginçe* ձևերը, որոնք առաջացել են *-gın, -gin* բառակազմական (վերջ)ածանցի և *-ça, -çe* համեմատական ածանցի միացումից: «Արևմտյան թուրքերենին» անցել են *-mça, -inçe* ձևերը, «հին թուրքերենում» երկար ժամանակ օգտագործվել են *ol-ınca, di-y-in-çe, kil-ınca, gür-inçe* ձևերը: Հետագայում (օսմանյան շրջանում) այս ածանցը, ենթարկվելով ձայնավորների ներդաշնակության կանոնին, տացել

²⁶ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 321:

²⁷ A. Caferoğlu, *Kuzeydoğu İllerimiz Ağzılarından Toplamalar*, İletişim yayınevi, Ankara, 1994, ss. 259-262.

²⁸ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 321-322.

²⁹ Н. Дмитриев, *Строй турецкого языка*, էջ 42:

է *al-inca*, *görme-y-ince*, *uyu-y-unca*, *gözük-ünce* ձևերը, որանք կենսունակ ու կիրառական է նաև այսօր³⁰:

Ժամանակակից թուրքերենում մակբայական այս կադա-պարաձևին ավելանում է տրական հոլովի ածանց, և այս կառույցն օգտավորվում է *dek* և *kadar* հետդիրների նետ՝ *doyunca-y-a kadar*, *gelinece-y-e dek*: *-inca*-ով մակբայական դերբայը արտահայտում է նաև ժամանակի իմաստ, հանդես է գալիս ժամանակի պարագայի պաշտոնում³¹: Հայերեն թարգմանելիս *-inca*, *-ince* ածանցով մակբայական դերբային որպես համարածեք հանդես է գալիս անորոշ դերբայը՝ դրված տրական հոլովով և պես կապի համադրությամբ: *-inca*-ով մակբայական դերբայն արտահայտում է գործողություն՝ ներկա, անցյալ, ապառնի ժամանակներում: Գործողության ժամանակը որոշվում է ստորոգյալով. *Yazınca gitti*.- Հենց որ նա գրեց, գնաց: *Bunu yazınca bana gösteriniz*.- Յենց որ սա (կ)գրեք (գրելուն պես), ինձ ցույց տվեք: *Kış yaklaşıncı göçmen kuşlar sıcak ülkelere gider*.- Ձմեռը մոտենալուն պես չվող թռչունները չվում են տաք երկրներ: *-mca*-ով մակբայական դերբայը, կազմվելով «ծխտական հիմքից», արտահայտում է այնպիսի գործողություն, որի չիրականանալը պայմանավորված է գլխավոր ստորոգյալով արտահայտված գործողությամբ. այն նույնպես պարտադիր դրվում է ծխտական ձևով³²: *Gece olmayınca yıldız görünmez*.- Մինչև գիշեր չլինի, աստղերը չեն երևում: *-inca* ածանցը, կցվելով *gelmek* բայի հիմքին, կախող է ստանալ նաև փոխաբերական իմաստ և նշանակել: նաև «ինչ վերաբերում է»³³. *Bana gelince...*- Ինչ վերաբերում է ինձ...

-casına (*-cesine*) ածանցով կազմվում է չափ ու վիճակ արտահայտող մակբայական դերբայ³⁴: Ա. Կոնոնովի բնորոշմամբ այն արտահայտում է «թվացող, կեղծ (ֆիկտիվ) գործողություն՝ կամ գործողության կատարման վարձ»³⁵, այսպես՝ *ahircasına*-կարծես թե (ոնց որ թե վերցնում է, *gelmezcetine*-ոնց որ թե չէր

³⁰ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 322-323:

³¹ Ալ. Մաֆարյան, Ա. Սալմոնյան, Տ. Լոբնազյան, *Թուրքերենի դասագիրք*, էջ 83:

³² А. Конов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 481:

³³ Ալ. Մաֆարյան, Ա. Սալմոնյան, Տ. Լոբնազյան, *Թուրքերենի դասագիրք*, էջ 83:

³⁴ N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 407:

³⁵ N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 487:

գալիս: Ölürcesine çalışıyordu-(Աշխատում էր մեռնելու չափ/իրեն չխնայելով): Koşarcasına yürüyordu-Այնպես էր քայլում, կարծես թե վազում էր /Վազելով էր քայլում/: Yalvarcasına bakıyor-Աղերսանքով էր նայում (Այնպես էր նայում, կարծես ինչ-որ բան էր աղերսում): Այս ածանցը, դրվելով **-ma** անորոշ դերբայից հետո, դարձյալ արտահայտում է վիճակ և աստիճան:

-alı, -eli-ով մակբայական դերբայն արտահայտում է ժամանակի պարագա, և ցույց է տալիս բայով արտահայտված գործողության նախնական (ելման, սկզբնական) պահը («այն ժամանակներից, ինչ», «այն ժամանակից, երբ»: Այս մակբայական դերբայը կարող է համադրվել նաև **beri** «ի վեր» հետդիրի հետ³⁶, մի երևույթ, որը, կարծես թե, անսովոր է գերունդիումի համար: Օգտագործվում է «**-den beri**» իմաստով՝ արտահայտելով տևողություն, ժամանակահատված՝ **çık-alı, görme-y-eli**: Երբեմն **beri** հետդիրից առաջ դրվում է բացառական հոլովի ածանց՝ **gel-eli beri, gid-eli-den beri**: **Ankaraya geleli kimseyi gömedim**-Ինչ եկել եմ Անկարա, ոչ մեկին չեմ տեսել: Ընդ որում, **-alı, -eli**-ով մակբայական դերբայը կարող է դրվել ուղղական կամ բացառական հոլովներով, որն իր սեփական իմաստային բնույթով ընդգծում է գործողության սկսվելու (ծագման) պահը³⁷ և նշում է այս մակբայական դերբայի անվանական բնույթը³⁸: Այս ածանցը գործածական է եղել նաև «հին թյուրքերենում»՝ նաևդես գալով **-galı, -geli** ձևով: «Արևմտյան թյուրքերենին» անցել է **-alı, -eli** ձևով: «Հին թյուրքերենում» այն արտահայտել է «**-mak için, -mek için**» իմաստը և կազմել պատճառ մատնանշող վիճակի մակբայ՝ «**al-galı-almak için**» վերցնելու համար, **gor-geli «görmek için**»: «Հին թյուրքերենում» և օսմաներենում, ինչպես նկատում է Մ. Էրգինը, առանց **beri** հետդիրի բացառական հոլովով դրված այս ձևը նույն իմաստով է ընկալվել՝ **bul-alı-dan, kes-eli-den**: Այս ածանցով մակդերբայը, ստանալով բացառական հոլովի վերջածանց, վերջին ձայնավոր հնչյունը կորցրել է՝ **göreliden, ireliden, direliden, olaldan, kurulaladan**:

³⁶ N. Коç, *Yeni Dilbilgisi*, էջ 332:

³⁷ А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 480: В. Гордлевский, *Грамматика турецкого языка*, Москва, 1928, էջ 127.

³⁸ Н. Дмитриев, *Строй турецкого языка*, էջ 57:

Մակբայական այս դերբայը օտարործվում է նաև հետևյալ ձևով՝ *geldim geledi, gittin gideli, aldı alalı*³⁹:

-*dansa (-dense)* մակբայական դերբայի ածանցը, կազմվելով հոլովական և թերի օժանդակ բայի ըղձական-պայմանական ածանցից. կազմում է հակադրություն արտահայտող մակբայական դերբայ⁴⁰. *Sana inanmaktansa, gidip gözlerimle görmeyi yeğlerim*- Քեզ հավատալու փոխարեն՝ ես կնախընտրեմ զնալ ու իմ աչքով տեսնել:

-*di...-alı* ածանցով մակբայական դերբայի մատնացույց է անում ժամանակ և վիճակ⁴¹. *Savaş başladı başlayalı her şey karaborsaya düştü*- Ինչ սկսվեց պատերազմը (սկսվեց-չսկսվեց/սկսված-չսկսված), ամեն բան հայտնվեց սև շուկայում:

Ածականական դերբայի -*dık* ածանցը բացառական, ներգոյական, տրական հոլովներով է համապատասխան հետդիրների զուգակցմամբ կազմում է ժամանակ է վիճակ արտահայտող մակբայական դերբայներ: -*dıktan sonra* կադապարով մակբայական դերբայը կազմվել է դերբայական -*dık*, բացառական հոլովի ածանցի և *sonra* հետդիրի կցման արդյունքում: Արտահայտում է ժամանակի իմաստ: *Sen İzmir'den ayrıldıktan sonra ben gelmişim*.- Քո՝ Իզմիրից մեկնելուց (հեռանալուց) հետո եմ ես եկել:

-*diğina...-acağına* ածանցով մակբայական դերբայը կազմվում է անցյալ ժամանակի դերբայ կազմող -*dık* և ապառնի ժամանակի դերբայ կազմող -*acak* ածանցների միջոցով է արտահայտում է հակադրություն⁴². *Onu sevdiğine seveceğine pişman olabilirsiniz*- Եթե նրան սիրես, հնարավոր է զոջաս:

-*diği biçimde (şekilde)* ածանցով մակբայական դերբայն արտահայտում է վիճակ⁴³. *Odanı istediğin biçimde düzenleyebilirsiniz*- Անկյակդ կարող ես դասավորել քո ուզածի պես: *Soruları benim istediğim biçimde yamtlayacaksınız*- Հարցերին պատասխանելու եք իմ ուզածի պես:

³⁹ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 323:

⁴⁰ N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 332:

⁴¹ D. Meriç, F. Meriç, *Temel Türkçe Dilbilgisi*, İnkılap Yayınevi, İstanbul, ss. 155-156.

⁴² N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 332:

⁴³ N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 408:

-*diğ* ածանցով և *halde* կապական բառով մակբայական դերբայն արտահայտում է վիճակ, հակադրություն⁴⁴. *Parası olduğı halde borç vermedi*-Չնայած որ փող ուներ, բայց պարտք չտվեց:

-*diğ* ածանցով *zaman* (-*diğ* *vakit*) բառով մակբայական դերբայը նույնպես մատնանշում է ժամանակի իմաստ⁴⁵. *Ders çalışmadığı zaman ne yaparsın?*-Ի՞նչ ես անում, երբ դաս չես սովորում:

-*diğ* *inda* կադապարաձեր կազմում է ժամանակի իմաստ արտահայտող մակբայական դերբայ. *Bu konuya akşam bize geldiğinde konuşuruz*- Երբ երեկոյան զաւ մեզ մոտ, այդ ժամանակ էլ կխոսենք այդ թեմայի մասին (Այդ թեմայի շուրջ կխոսենք երեկոյան՝ քո գալու ժամանակ/երբ կգաս): -*diğ* *indan* կադապարաձեր կազմում է պատճառ արտահայտող մակբայական դերբայ: *Sular kesildiğinden banyo yapamadım*.- Քանի որ ջուրը կտրվեց, չկարողացա լոգանք ընդունել: (Ջուրը կտրվելու պատճառով չկարողացա լոգանք ընդունել):

-*madan//meden* (<-*ma+den//me+den*) մակբայական դերբայի ածանցը, կցվելով բայահիմքին, կազմում է մակբայական դերբայ, որն արտահայտում է. ա) ձեռն պարագա՝ «առանց» իմաստի: Այս մակբայական դերբայը հանդիսանում է ժխտական հիմքից կազմված -(y)*arak*-ով մակդերբայի քերականական հոմանիշ, ընդ որում նրանց միջև եղած տարբերությունը քերականական բնույթ ունի: -*madan*-ով արտահայտված մակբայական դերբայի դեպքում գլխավոր է կախյալ գործողությունների միջև գոյություն ունի ավելի երկար ժամանակահատված, քան -(y)*arak*-ով մակբայական դերբայի դեպքում⁴⁶: *Ben gözlerimi hiç ayırmadan ona bakıyordum*- Ես առանց այք թարթելու նրան էին նայում: բ) Ժամանակի պարագա՝ «մինչե» իմաստով: Իմաստը ընդգծելու համար այս մակբայական դերբայը կիրառվում է նաև «-*önce// evvel*» հետդիրների հետ⁴⁷: *Uzun yola çıkmadan önce iyi uyu*-Երկար ճանապարհ ընկնելուց առաջ, լավ քնի՛ր: գ) Այս ածանցը փաստորեն արտահայտում է ժխտական իմաստ, որն էլ կցվում է միայն հաստատական բայերի

⁴⁴ N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 408:

⁴⁵ N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 408: Տե՛ս նաև M. Hengirmen, *Türkçe Dilbilgisi*, էջ 198E

⁴⁶ A. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 483:

⁴⁷ A. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 483:

արմատներին ու հիմքերին: Լեզվաբան-թուրքագետների կարծիքով այս ածանցն ի հայտ է եկել բավականին վաղ: «Հին թուրքերենում» այս ածանցն ունեցել է *-madin, -medin* դրսևորման ձևը, որն էլ փոխանցվել է «արևմտյան թուրքերենին»: Ածանցը երկար ժամանակ կիրառվել է նաև «հին թուրքերենում», որից հետո ձեռք է բերել ժամանակակից թուրքերենի *-madan, -meden* ձևը: Ուսումնասիրողների կարծիքով այն ստաջ է նկնլ բացառական հոլովի ազդեցությամբ: Իր գործառույթով *-madin, -medin*- ի *-din, -din* ձևը նույն է, ինչ *-madan, -meden*-ի *-dan, -den* ձևը: Եվ քանի որ ժխտական վերջածանցով բայերի արմատներին ուղղակի բացառական հոլովի ածանց չի կարող կցվել, ապա չի կարելի ասել, որ բացառական հոլովին կցված այս մակբայական դերբայի ածանցն ուղղակիորեն առաջ է եկել ժխտական ու բացառական հոլովի վերջածանցների միաձուլումից⁴⁸: Մ. Էրգինի կարծիքով այս կառույցը ի հայտ է եկել *-ma-t-i-n* - *-me-t-i-n* ձևից՝ *bil-me-t-in*: Ընդունված է ասել, որ *-madin, -medin* գերունդիում ածանցը ծագել է «*-ma, -me* ժխտական ածանցի, *-t* բայից գոյական կազմող ածանցի, *-i, -i* օգնող (օժանդակող) ձայնավորի և *-n* «փնտրումնետալ» ածանցի միացումից: Միննույն ժամանակ *-t*-ն, ընկնելով երկու ձայնավորների միջև, ձայնեղացել է՝ վերածվելով *đ*-ի: Մակայն պետք է ասել, որ մեզ այնքան էլ շատ համոզիչ չի թվում *-madin, -medin*-ի նմանատիպ մեկնաբանությունը: Այս բացատրությունը թուրքերենում գոյություն ունեցող որոշ ձևերի ծագումը լուսաբանելու համար տեսական պնդումների բնույթ է կրում, որը շատ դժվար է ընդունել⁴⁹:

Մ. Էրգինը նշում է, որ ածանցի կառույցը պարզաբանելու համար անհրաժեշտ է ընդունել այն հանգամանքը, որ այն իր մեջ պարունակում է ժխտական և բացառական հոլովի ածանցներ և ածանցի ծագումը նա փնտրում է ժխտական բայի արմատի մեջ՝ *-ma, -me* և բայից գոյական կազմող ածանցից կազմված գոյականի բացառական հոլովաձևում՝ *bil-me-me-din*: «Այստեղ իրար հաջորդող երկու նույն հնչյուններից մեկը ընկել է, որի արդյունքում է առաջ է եկել *-madin, medin* գերունդիումը, որն էլ իր մեջ

⁴⁸ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 323-324:

⁴⁹ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 323-324:

պարունակում է ինչպես ժխտականություն, այնպես էլ բացառական հոլովածն»⁵⁰: Միաժամանակ Մ. Էրգինն այն համալրում է գոյականի հոլովածն. «Հատկապես անհրաժեշտ է նշել, որ այս գերունդիումի մեջ իմաստային տեսանկյունից միշտ առկա է եղել բացառական հոլովածը: Գոյականի հոլովական ածանցների մեջ բացառական հոլովը երբեմն նախադասության մեջ հանդես է գալիս մակբայի շարահյուսական դերով (*korkusundan kaçtı*)⁵¹: Որոշ թյուրքական բարբառներում և խոսվածքներում բացառական հոլովի -d-ն վերածվել է -y-ի՝ -*mayın*, -*meyin*: Այսինքն, ածանցի ծագման ժամանակ ոչ թե չի եղել բացառական հոլովածնը, այլ՝ գերունդիումի ածանցի մեջ մոռացության է մատնվել բացառական հոլովի ածանցը: Այդ պատճառով էլ d>y-անցումը ցույց չի տալիս, որ ածանցի ծագման ժամանակ թերևս բացառական հոլովածն չի եղել: Իսկ «արևմտյան թյուրքերենում» նմանատիպ -y- անցում չի արձանգրվել, և ածանցի մեջ պահպանվել է բացառական հոլովածնը⁵²: «Արևմտյան թյուրքերեն» -*madm*, *medin* ձևը վերածվել է -*madan*, -*meden*-ի «հին թյուրքերենի» վերջին շրջանում: -*madin*, -*medin* ձևը որոշ ժամանակ գոյություն է ունեցել՝ հասն օսմաներենում՝ *gel-medin*, *aç-madin*: Հետագայում սա իր տեղն է զիջել -*madan*, -*meden*-ին՝ *otur-madan*, *uyu-madan*, *dinlen-meden*, *çek-meden*⁵³: Վերջին ժամանակաշրջանում -*madan*, -*meden* գերունդիումը, իրենից հետո ստանալով ծոց բառը, ձևոր է բերել կապական կիրառության նշանակություն՝ *gelmeden önce*⁵⁴. *Soruma yanıı vermeden önce düşün*-Մինչև հարցիս պատասխանելը, մտածիր (Հարցիս պատասխանելուց առաջ մտածիր): *Yola çıkmadan önce arabanın kontrolünü yaptır*- Մինչև ճանապարհ ընկնելը մեքենան ստուգել տուր:

-*maksızın* (<-*mak-sız-ın*)//*-meksizin* ածանցով մակբայական դերբայն արտահայտում է ձևի պարագա և իմաստով մերձենում *y(arak)*-ով մակբայական դերբային (կազմված ժխտական հիմքից) և -*madan*-ով մակբայական դերբային, սակայն ժամանակակից

⁵⁰ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 323-324:

⁵¹ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 324:

⁵² A. Caferoğlu, *Kuzeydoğu İlerimiz Ağzlarından Toplamalar*, s. 25.

⁵³ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 324-25:

⁵⁴ N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 332:

թուրքերենում համեմատաբար քիչ է կիրառվում⁵⁵. Bir şey söylememeksizin aynılaş-Ոչինչ չասելով՝ հեռացավ: -maktan ածանցով կազմվում է պատճառ և հետևանք արտահայտող մակբայական դերբայներ⁵⁶: Nasihatlerini dinlemekten bıktım usandım-Կշտացել եմ նրա խրատները լսելուց:

-maktansa ածանցը, կցվելով բայահիմքին, կազմում է հակադրություն արտահայտող մակբայական դերբայ: Gidip polise teslim olmaktansa ölmeysi yeğledi- Նա նախընտրեց մեռնել, քան թե գնալ ու հանձնվել ոստիկանությանը:

-ıcak, -icek մակբայական ածանցը երկար ժամանակ գործածական է եղել «արևմտյան թուրքերենի» առաջին շրջանում, նաև՝ օսմաներենում: Սկզբում ունեցել է -ıçak, -icek ձևը՝ di-y-ıçek, at-ıçak: «Հին թուրքերենի» վերջին շրջանում աստիճանաբար այն վերածվել է -ıcak, -icek ձևի՝ նույն կերպ փոխանցվով օսմաներենին՝ al-ıcak, gör-icek: Հետագայում այս ածանցը գրավոր խոսքում կորցրել է իր կիրառությունը: Այսօր, այն միայն առկա է բանավոր խոսքում: Այս ածանցը ներթափվել է ձայնավորների ներդաշնակության կանոնին⁵⁷: -ıcak, icek վերջաձայնները, երկար ժամանակ գործածվելով «արևմտյան թուրքերեն», ի վերջո իր տեղը զիջել է -ınca, -ince ձևերին⁵⁸:

-dikça (-dikçe, -dukça, -dükçe) ածանցով մակբայական դերբայը մատնանշում է ժամանակ ու վիճակ⁵⁹, հանդես է գալիս որպես ժամանակի պարագա: -dikça-ով մակդերբայը ցույց է տալիս նաև համընթաց գործողություն, որի զարգացմանը զուգահեռ ծավալվում է սատրագյալի գործողությունը⁶⁰: Այն կարող է արտահայտել. ա) գործողության կատարման աստիճանակա- նություն, բ) կանոնավոր կրկնություն, բազմակիություն: Հայերեն թարգմանելիս համապատասխանում է հայերենի «ամեն անգամ երբ» կամ երկու գործողությունների միջև «երբ» շաղկապավոր կառույցին, գ) երկու գործողությունների միջև ժամանակավոր

⁵⁵ А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 484:

⁵⁶ N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 331:

⁵⁷ St'u M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 325:

⁵⁸ St'u M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 326:

⁵⁹ St'u N. Koç, *Yeni Dilbilgisi*, էջ 411:

⁶⁰ St'u A. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 482:

կապ⁶¹: Հայերեն թարգմանելիս այն կարող է արտահայտվել «քանի դեռ» շաղկապավոր կառուցով (Օր.՝ *Siz sağ ben var oldukça elbet bir gün gene rastlaşırız*. Քանի դեռ դուք առողջ եք, իսկ ես կենդանի, իհարկե մի գեղեցիկ օր մենք կրկին կհանդիպենք):

-*dıkça* ածանցով կազմված մակբայական դերբայի ժխտական ձևն արտահայտում է գործողություն, որի ավարտից առաջ չի ավարտվում ստոյադայի գործողությունը: *Ahmed'in mektubunu gönderdikçe bu habere inanmam*. Քանի դեռ չեմ տեսել Ահմեդի նամակը (Առանց Ահմեդի նամակը տեսնելու) այդ տեղեկությանը չեմ հավատա⁶²:

-*gaç*, -*geç* ածանցով մակբայական դերբայը գործածվել է «հին թուրքերենի» վերջին և օսմաներենի սկզբնական շրջաններում, ինչպես նաև ադրբեջաներենում: Իմաստային տեսանկյունից այս ածանցն ամբողջությամբ համապատասխանում է -*ıcak*, -*icek* և -*ınca*, -*ince* ձևերին: Հետագայում այն ամբողջությամբ մատնվել է մոռացության՝ իր տեղը զիջելով ավելի կենսունակ -*mca*, -*ince* ածանցին՝ *di-geç//diyinca*-աւելուն պես, *it-geç//edinca*-անելու պես, *gör-geç//görmince*-տեսնելուն պես⁶³:

-(*i*)*r*.....-*maz* (-*r*.....-*mez*) ածանցը, կցվելով բայի արմատին, կազմում է արագություն արտահայտող մակբայական դերբայ. *Ondan bir haber alır almaz bana bildir*.-Նրանից լուր ստանալուն պես (ստացած-չստացած) անմիջապես ինձ տեղեկացրու:

Ժամանակակից թուրքերենի մակբայական դերբայները կրում են շեշտ, որն ընկնում է վերջին վանկի ձայնավորի վրա: -*ınca*, -*ince* ածանցներում շեշտն ընկնում է առաջին վանկի ձայնավորի վրա, -*madan*, -*meden* ածանցը շեշակիր չէ, ե շեշտն ընկնում է իրեն եախորդող վանկի վրա, -*ken*-ը նույնպես շեշտ չի կրում, շեշտը ընկնում է եախորդող վանկի վրա, -*dıkça*, -*dikçe*-ի շեշտն ընկնում է դերբայական -*dık*, -*dik* ածանցի վրա: Թուրքերենում բավականին տարածված երևույթ է հետադրությունների՝ մակբայական դերբայների համատեղ կիրառությունը:

⁶¹ А. Кононов, *Грамматика современного турецкого литературного языка*, էջ 482:

⁶² Տե՛ս Ալ. Մաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոբազյան, *Թուրքերենի դասագիրք*, էջ 144:

⁶³ M. Ergin, *Türk Dil Bilgisi*, էջ 329:

Այսպիսով՝ վերը բերված լեզվական փաստերի համադրումից հանգում ենք հետևյալին՝ մակբայական դերբայները (**ulaç**) չեն մտնում բայի խոնարհման համակարգի մեջ և չեն կրում դիմային իմաստ: Նախադասության մեջ կատարում են բայական անդամի լրացման պաշտոններ և այս հատկանիշներով էլ տարբերվում են ածականական դերբայներից: Ստանում են սեռային ու ժխտման վերջածանցներ: Նրանց գործողության ոլորտն ավելի ընդարձակ է, քան ածականական դերբայներինը: Հստ իրենց ունեցած գործառնության է իմաստաբանական առանձնահատկությունների՝ մակբայական դերբայները բաժանվում են չորս խմբի՝ կապական նշանակության (**Bağlama Ulaçları**), վիճակ արտահայտող (**Durum Ulaçları**), ժամանակ արտահայտող (**Zaman Ulaçları**), պատճառ մատնանշող (**Sebep Ulaçları**): Մակբայական դերբայի հիմնական դերը դերբայական դարձված ձևավորելն է, որով էլ կազմում են ընդարձակ լրացական անդամով պարզ նախադասություններ: Ժամանակակից թուրքերենի մակբայական դերբայներն իրենց գործառնությամբ համապատասխանում են հայերենի անորոշ դերբայի հոլովված ձևերին: